ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՊՈԱԿ

<<ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ОВ.ТУМАНЯНА>> ГНО МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

✉ ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 36

☎ /0322/ 4-63-87

Fax /0322/ 4-18-56

թիվ 1 որոշման

<<12>> մարտի 2015թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/7>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ 11/7>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Վանաձորի Պետական Համալսարան >> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու՝Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն ընթացակարգի ծածկագիրն է հանդիսանում << ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ 11/7-15/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36 հասցեով,վարչական մասնաշենք,ընդհանուր բաժին մինչև 2015 թ. մարտի 25-ը, ժամը 10:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36 հասցեով,վարչական մասնաշենքում, 2015 թ. մարտի 25-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում շինանյութի ձեռքբերումը:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես մեկ չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:Գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացվում է մեկ թվով, պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Մասնակցի կողմից առաջարկվող գինը ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց արժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն,
2. գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով /մեկ բնօրինակ և երկու պատճեն/:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՇՀԱՊՁԲ 11/7 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանք ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները, պարտադիր նշելով “համարժեք” բառը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumner@vsu.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 15 թերթ:

Ռեկտոր՝ Գ.Խաչատրյան

Կատարող՝ Գնումների համակարգող
☎ 094007607

Հավելվածթիվ

1

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/7>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ 11/7-15/2>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____Հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից

N_____ծածկագրով

Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին(չափաբաժիններին)

չափաբաժնի (չափաբաժիններին)համար

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով(կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝_____:

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն,ազգանունը) (Ստորագրությունը) Կ.Տ.

'___' _____2015թ

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/7>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ 11/7-15/2>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված **<<** ----------**>>** ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ---------- առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1		*3*	*4*	*5=3+4*

***3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ՇԻՆԱՆՅՈՒԹԻ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ-11/7-15/2

ք. Վանաձոր **<<___>>_____**

Վանաձորի պետական համալսարանը, (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս ռեկտոր Գ. Խաչատրյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<-- >> -ն, (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս ---- , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված շինանյութ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի, Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա/ չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.2 կետով նախատեսված տույժը.

բ/ հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Կատարողն իրականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.1.4.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/ մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի լարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

2.1.5 Ջնջել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ, ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագիր լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

2.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

2.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.4.2 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.3 Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.4 Հետ տանել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.6 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.7 Սույն Պայմանագրի 2.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

2.4.8 Սույն Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

3.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

3.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

3.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում

Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: ***Ընդ որում, Կատարողը ներկայացնում է այդ ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը, բացառությամբ եթե այդ ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ:*** Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքի չընդունելու պատճառաբանված մերժումը:

5. Մատակարարման պայմանները

5.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

6.1. Սույն պայմանագրով մատակարարված Ապրանքի ընդհանուր գինը կազմում է ---------- (----------) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

6.2 Պատվիրատուն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի, Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջների և մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և ուժի մեջ է մինչև

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.4Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Ն Ո Ր Դ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

Հավելված թիվ 1
<<>> ------2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/7-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Շինանյութ

հ/հ	Գնման առարկայի անվանում	Տեխնիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Քանակը
1	Մետր 1	3մ	հատ	1
2	Մետր 2	5մ	հատ	1
3	Մետր 3	10մ	հատ	1
4	Ավազ	Կվարցային/ բետոնի համար/, 70կգ-ոց պարկ	հատ	40
5	Սևահող	Մաղած սևահող	տոն նա	4
6	Աղ	Տեխնիկական, ձյուն մաքրելու	կգ	100
7	*Սրաքար*	Զանազան գործիքներ սրելու քար, "Лодочка"	հատ	4
8	Կտրող քար	Φ 24*115, ZEBRA կամ համարժեք	հատ	20
9	Կտրող քար	Φ 24 *180, ZEBRA կամ համարժեք	հատ	20
10	Կտրող քար	Φ 24 *230, ZEBRA կամ համարժեք	հատ	20
11	Ապակի	3մմ հաստությամբ,2 մասի բաժանված	քմ	10
12	Խցուկ պոմպերի սալնիկի համար	6մմ	մ	10
13	Խցուկ պոմպերի սալնիկի համար	8մմ	մ	10
14	Խցուկ պոմպերի սալնիկի համար	10մմ	մ	10
15	Խցուկ	Ռետինե 20մմ	մ	10
16	Պակլի թելով	Բնական հումքից , մեծ չափի կծիկ	հատ	3
17	Պակլի անթել	Ժապավենային , 19մմ*15մ*20մմ	հատ	20
18	Հատակի լամինատ	Բաց գույնի,բարձր որակի, խոնավադիմացկուն, FLURING կամ համարժեք	$մ^2$	467
19	Սպունգ հատակի լամինատի	Բարձր որակի	$մ^2$	450
20	Ներսի անկյունային դետալ	Շրիշակի գույն,որակյալ	հատ	144
21	Դրսի անկյունային դետալ	Շրիշակի գույն,որակյալ	հատ	104
22	Ուղիղ միացնող դետալ	Շրիշակի գույն,որակյալ	հատ	84
23	Լամինատե շրիշակ	Հատակի լամինատին համապատասխան,բաց գույնի, լարանցման փոսորակով 1 տեղանոց	մ	440
24	Պլաստմասե տարրա (50-70լ)	50-70լ,ջրի մեծ տարրա, պլաստմասսե,60սմ երկ.,կափարիչով	հատ	5
25	Պլաստմասե տարա (80լ)	80լ,ջրի մեծ աման,ջրի մեծ տարրա, պլաստմասսե,70սմ երկ.,կափարիչով	հատ	2
26	Էմուլսիա	1կգ ,CROWN Chemical կամ համարժեք	հատ	30
27	Սոսինձ /սալիկի/	25 կգ,Լիտոկոլ K17 կամ համարժեք	հատ	5

28	Սոսինձ կահույքի	Երկկոմպոնենտ	հատ	5
29	Սիլիկոն	Կերամիկայի	հատ	5
30	Էլ. Շարժիչ	N-1.1 Կվտ, n-1385 պտ/րոպ հզորությամբ	հատ	2
31	Էլեկտրական անջատիչ դրսի	MAKEL 250 վտ կամ համարժեք	հատ	40
32	Էլեկտր. անջատիչ ներսի	MAKEL 250 վտ կամ համարժեք	հատ	50
33	Լար հեռախոսի	Ներքին միացումների համար	գծմ	50
34	Մետաղական փափուկ լար	Φ 2մմ	կգ	3
35	Մետաղական փափուկ լար	Φ 3մմ	կգ	3
36	Մետաղական փափուկ լար	Φ 6մմ	կգ	3
37	Տեսախցիկների մալուխ	Էկրանային կաբել,որակյալ	մ	100
38	Էլեկտրոմալուխային ծայրակալ (նակալեչնիկ)	Կաբելային,որակյալ,մեծ տրամագծով,Φ15	հատ	3
39	Բարձրախոսի մարտկոց	Krona կամ համարժեք	հատ	15
40	Լապտերի մարտկոց	AAA համարի մարտկոց	հատ	16
41	Մարտկոց	AA համարի,որակյալ	հատ	200
42	Էլ. Լապտեր սնուցման բլոկով	RL-5519 կամ համարժեքը, մեծ	հատ	4
43	Ստարտյոր ցերեկ. լույսի	50հատ -110,70 հատ-220Վտ	հատ	100
44	Լապտեր	1 հատ AAA մարտկոցով աշխատող ձեռքի լապտեր,լույսը հզոր(դիոդային)	հատ	4
45	Լամպ ցերեկային մեծ	36Վտ,100-120սմ,100-60սմ ZENIT կամ համարժեք,100-ապրիլ(50,50)	հատ	200
46	Լամպ էլեկտրական	100Վտ ZENIT կամ համարժեք	հատ	550
47	Լամպ էլեկտրական	500Վտ ռուսական կամ համարժեք	հատ	5
48	էլեկտրական վարդակ ներքին	MAKEL 250 վտ կամ համարժեք	հատ	50
49	էլեկտրական վարդակ արտաքին	MAKEL250 վտ կամ համարժեք	հատ	40
50	էկոնոմ լամպ	23-40Վտ,որակյալ,CAUTION կամ համարժեք	հատ	40
51	Դրսի լույսի լապտեր	Գնդաձև,պլաստմասե,փակ, TINKO Φ 30սմ կամ համարժեք	հատ	10
52	Լամպ (60Վտ)	60Վտ	հատ	20
53	Լամպ (100Վտ)	100Վտ	հատ	50
54	Լամպ	Լամպ (подвесной),10 հատ 60 և 10 հատ 100 Վտ,լամպի երեսաի Φ-63մմ,SPOT R63 կամ համարժեք	հատ	20
55	Դրսի լամպի պաշտպանիչ գունդ	Որակյալ,ապակե(плафон),ձգովի, Φ-7,8սմ	հատ	10
56	Երկարացման լար	3մ, 3 տեղանի, MAKEL կամ համարժեք,կաբելային <<сечениян>> բարձր՝ 2-2.5 մմ կտրվածքով	հատ	8
57	Երկարացման լար	5մ,3 տեղանի, MAKEL կամ համարժեք,կաբելային <<сечениян>> բարձր	հատ	9
58	Էլեկտրական երկարիչ	5-6 տեղանոց,10 մետր,կաբելային <<сечениян>> բարձր	հատ	5
59	Էլեկտր. եռաբաշխիչ	MAKEL կամ համարժեք	հատ	23
60	Ցերեկային լույսի սխեմա	1.2 մ TINKO կամ համարժեք	հատ	50
61	Էլեկտրական գայլիկոնիչ	Ընթացքը պարապ պտույտի՝ 3200 պտույտ/րոպե, Լարում՝220 Վ,Հզորություն՝ 1250 Վտ, <<ЗЕНИТ>> կամ համարժեք	հատ	1
62	Ինդիկատոր	Հոսանքի ցուցիչ,պլաստիկից, ունի 3 ռեժիմ ՝ «0»-կոնտակտային ռեժիմ, «L»-ոչ կոնտակտային ռեժիմ ցածր	հատ	2

		զգայունության,«H» - ոչ կոնտակտային ռեժիմ բարձր զգայունության		
63	Մեկուսիչ ժապավեն	Մեկուսիչ ժապավեն, 19մմx20մx0,18մմ,	հատ	5
64	Էլեկտրոդ	Փոփոխական հոսանքի, 3.2*350մմ GEKA կամ համարժեք	տուփ	5
65	Էլեկտրոդ	Փոփոխական հոսանքի , 4.0*350մմ GEKA կամ համարժեք	տուփ	5
66	կոռոբներ	4սմ լայ. X 2սմ երկ,պլաստմասսե	մ	200
67	կոռոբներ	4սմ լայ. X 2սմ երկ,մետաղյա	մ	50
68	Ձեռքի սայլակի անիվ	Φ 20-25 սմ	հատ	1
69	Ծորակի միջուկներ	1/2`(полдюйм), <<шпиндель вентиля>>	հատ	10
70	Պոմպ ջրամուղ	Նասոս,2800 պտ/րոպ, 5-40 լ/րոպ, դրսում դրվող(բասեինից ջուրը դուրս մղելու համար)	հատ	1
71	Մղլակ եվրոդոռան	6.3մմ, Fapim կամ համարժեք	հատ	5
72	Ջրի ծորակի բանալի. հավաքածու	KLY-TEK կամ համարժեք	տուփ	1
73	Կցորդիչներ	Պոլ դուիմ կոռդով փողրակների միացման համար	հատ	3
74	Ջրի պոմպ	Շարժիչի,2K6	հատ	1
75	Գոտի	Ռեմեն(Սեպափոկավոր),0630	հատ	4
76	Կլոր սղոց	Հաստոցի համար,32x320x2 մմ, Z= 36,կարծր համաձուլվածք	հատ	1
77	Զոդիչ (паяльник)	Էլեկտրական,որակյալ	հատ	1
78	Խողովակի կցամաս (անկյունակ)	Φ 25	հատ	2
79	Խողովակի կցամաս (մուֆտ)	Φ 25	հատ	2
80	Մետաղապլաստե խողովակ	Φ 25	մ	6
81	Դուռ	Փայտե,իր շրջանակով,բաց գույնի	հատ	1
82	Անկյունակ	Մետաղական էլեմենտ 40 սմ պատուհանագոգերի տակ տեղադրման համար	հատ	180
83	Ծխնի եվրոդռան (петли)	Որակյալ,9.3սմ	հատ	10
84	Ռետինե ձող	Պոմպերի և շարժիչների միացման,20մմ	մ	10
85	Ծորակ լվացարանի	Φ 15 մմ մեկ տեղանոց, նիկելապատված, VILLA կամ համարժեք	հատ	20
86	Ծորակ լվացարանի ցնցուղի հետ	Լոգարանի համար,Grow XL կամ համարժեք	հատ	4
87	Առանցքակալ	փակ երկկողմանի 304	հատ	2
88	Առանցքակալ	փակ երկկողմանի 305	հատ	2
89	Կպչուն ժապավեն	20մմ*10մ VINI tope կամ համարժեք	հատ	30
90	Վինտիլ	15մմ ռուսական արտադրության, բրոնզե կամ համարժեք	հատ	15
91	Վինտիլ	20 մմ, բրոնզե, VENUS կամ համարժեք	հատ	10
92	Ջեռուցման մարտկոց	Թուջե,7հատանոց,ЧМ2-100-500 կամ համարժեք	հատ	5
93	Զուգարանակոնք	Սպիտակ COCO կամ համարժեք	հատ	1
94	Լվացարան	Սպիտակ COCO կամ համարժեք	հատ	3
95	Տաք և սառը ջուրը խառնող ծորակ	Որակյալ	հատ	2
96	Ցնցուղով ջրի խառնիչ	<<душ смеситель>>,որակյալ	հատ	2
97	Սանդուղք կրկնակ	Ամուր,որակյալ,3մ-անոց	հատ	1
98	Զուգարանակոնքի կափարիչ	Սպիտակ,պլաստմասե,որակյալ	հատ	5
99	Գրունտովկա	5 կգ –անոց	հատ	5
100	Ներկի լուծիչ	0.5լ, CROWN Chemical կամ համարժեք	հատ	20
101	Շպակլովկա	30կգ	հատ	20
102	Գիպսոլիտ	35 կգ	հատ	10

103	Պտուտակ (дюбель)	L- 4սմ Φ - 5մմ	հատ	630
104	Աշխատանքային գործիքներ	Հարթաշուրթ,պտուտակահան(խաչաձև և հարթ), մուրճ ,սղոց	կոմպլեկտ	1
105	Դռան փական	FIYALTI բարձրորակ կամ համարժեք	հատ	20
106	Փականի միջուկ	h =35 մմ 7սմ FIYALTI կամ համարժեք	հատ	10
107	Փականի միջուկ	h =35 մմ 9սմ FIYALTI կամ համարժեք	հատ	10
108	Փականի միջուկ	h =35 մմ 10 սմ FIYALTI կամ համարժեք	հատ	10
109	Փականի բռնակներ	Առանց փականի	զույգ	10
110	Անուր /хомут/	Մետաղական φ15մմ	հատ	10
111	Անուր /хомут/	Մետաղական φ20մմ	հատ	10
112	Պտուտակ կապրոնե	6 սմ	հատ	500
113	Պտուտակ կապրոնե	7 սմ	հատ	500
114	Պտուտակ կապրոնե	10 սմ	հատ	500
115	Պտուտակ	4*16	հատ	500
116	Պտուտակ	4*20	հատ	500
117	Պտուտակ	4*40	հատ	500
118	Պտուտակ	4*60	հատ	500
119	Պտուտակ սև	4*60	հատ	500
120	Գայլիկոն	φ 3 մմ արագահատ պողպատ	հատ	4
121	Գայլիկոն	φ 3.5 մմ արագահատ պողպատ	հատ	4
122	Գայլիկոն	φ 4 մմ արագահատ պողպատ	հատ	4
123	Գայլիկոն	φ 5 մմ արագահատ պողպատ	հատ	4
124	Գայլիկոն	φ 6 մմ արագահատ պողպատ	հատ	4
125	Գայլիկոն	φ 8 մմ արագահատ պողպատ	հատ	4
126	Գայլիկոն	φ 10 մմ արագահատ պողպատ	հատ	4
127	Գայլիկոն	φ 5 մմ կարծր համաձուլվածք	հատ	4
128	Գայլիկոն	φ 6 մմ կարծր համաձուլվածք	հատ	4
129	Գայլիկոն	φ 8 մմ կարծր համաձուլվածք	հատ	4
130	Գայլիկոն	φ 10 մմ կարծր համաձուլվածք	հատ	4
131	Գայլիկոն	φ 12մմ կարծր համաձուլվածք	հատ	4
132	Շվեցար	Միջին չափի,60կգ-անաց դռների համար,180^0 բացվածք,կորեական, King կամ համարժեք	հատ	10
133	Շվեցար	Մեծ չափի,120կգ-անաց դռների համար, 180^0 բացվածք,կորեական, King կամ համարժեք	հատ	10
134	Ապակու վրա տեղադրվող փական	Herme ZINC ALLOY DRAWER LOCK կամ համարժեք	հատ	5
135	Նասադկա	Տարբեր տեսակի(շուրուբավյորտի նասադկա,զվյոզդչկեք)	հատ	20
136	Ամրակներ	Ապակիները ստենդերին ամրացնելու համար	հատ	30
137	Կապրոնե խամուտ	Կապրոնե ամրակալ,մեխով, լարերը սեղաններին կամ պատերին ամրացնելու համար	հատ	100
138	Խարտոց	Լարերը գետնին ամրացնելու, խամուտ 75 պլասմաս T-19, HB1=240	հատ	5
139	Պտուտակահանի հավաքածու	8 h.,Crv,Магнитогорск/ТЕПЛО/ կամ համարժեք	հատ	6
140	Բռնակ եվրոդռան	Որակյալ,միայն բռնակները	զույգ	15
141	Բռնակ եվրոդռան	Որակյալ,ամբողջ կոմպլեկտով	զույգ	5
142	Բռնակ պահարանի	Բոլտով ձգվող պահարանի փոքր բռնակներ,կլոր	հատ	90
143	Թի	Ձյուն մաքրելու,ամուր որակյալ	հատ	5
144	Պտուտակ	Անկյունակի համար	հատ	500
145	Հղկաթուղթ	Կտորի հիմքով ,24*25 սմ	գծմ	10
146	Հղկաթուղթ	Կտորի հիմքով ,70մմ*25 սմ	գծմ	10

147	Հղկաթուղթ	Թղթե հիմքով, 280 Cw ,230մմ*280մմ	հատ	20
148	Հղկաթուղթ	Թղթե հիմքով ,360 Cw, 230մմ*280մմ	հատ	20
149	Հղկաթուղթ	Թղթե հիմքով ,600 Cw, 230մմ*280մմ	հատ	20
150	Մուրճ	Միջին չափի,որակյալ	հատ	1
151	Հարթաշուրթ	Միջին չափի ,որակյալ	հատ	1
152	Պտուտակահան	Միջին չափի ,որակյալ	հատ	1
153	Կծաքցան	Միջին չափի ,որակյալ	հատ	2
154	Եղան	4 մատանի,պոչով,ամուր և որակյալ	հատ	2
155	Պտուտակահան	Մագնիսական գլխիկով,ձևավոր	հատ	1
156	Բանալի (ключ)	Կոմպլեկտում 10 հատ, ըստ չափերի բանալիներ	կոմպլ.	2
157	Բանալի ջրմուղագործի	Չուգունից պատրաստվաց, նախատեսված հատուկ ամուր երկաթների հետ աշխատելու համար,բերանի չափը մեծացվող և փոքրացվող	հատ	2
158	Մեխահան	Աքցան նախատեսված մեխ հանելու համար	հատ	1
159	Մեխ 1	40 մմ	կգ	1
160	Մեխ 2	50 մմ	կգ	1
161	Մեխ 3	60 մմ	կգ	1
162	Մեխ 4	70 մմ	կգ	1
163	Մեխ 5	90 մմ	կգ	1
164	Մեխ 6	100 մմ	կգ	1
165	Մեխ 7	Ապակու 8մմ	կգ	1
166	Հենակներ մեխով	Պահարանների թիթեղները պահելու հենակներ,թիթեղները դրվում են հենակների վրա,փոքր	հատ	40
167	Հենակներ առանց մեխի	Պահարանների թիթեղները պահելու հենակներ,թիթեղները դրվում են հենակների վրա,փոքր	հատ	40
168	Խցաններ	Եվրոջեռուցման մարտկոցի խղաններ,հետին և առաջի մասերի (Փակ և անցքով)	կոմպլեկտ	1
169	Հոլովակ մորթով	10սմ, BONDIT կամ համարժեք	հատ	5
170	Հոլովակ մորթով	25 սմ,BONDIT կամ համարժեք	հատ	5
171	Շտուցեր	15 մմ ներսից դրսի պարուրակով բրոնզե	հատ	10
172	Ռետինե տակդիր	Ջրի ծորակի փականների ներսի համար 15մմ	հատ	30
173	Ռետինե տակդիր	Ջրի ծորակի փականների տակ դնելու համար 20մմ	հատ	30
174	Գարմոշկա	Զուգարանակոնքի	հատ	3
175	Վրձին	4 սմ	հատ	5
176	Վրձին	3 սմ	հատ	5
177	Վրձին	2սմ	հատ	5
178	Վրձին	Լայն, 70*170 մմ	հատ	5
179	Փոխանցիչ	15մմ երկկողմանի դրսի պարուրակով,խողովակի	հատ	10
180	Ֆաներա	10մմ հաստությամբ, 1.52*1.52 մ	հատ	5
181	Լատեքսային ներկ	Սպիտակ, 15լ ,MIX կամ համարժեք	հատ	4
182	Փչովի ներկ	Կարմիր, ABRO ,226գ կամ համարժեք	հատ	3
183	Փչովի ներկ	Կանաչ, ABRO ,226գ կամ համարժեք	հատ	3
184	Փչովի ներկ	Կապույտ, ABRO ,226գ կամ համարժեք	հատ	3
185	Փչովի ներկ	Սպիտակ, ABRO ,226գ կամ համարժեք	հատ	3
186	Փչովի ներկ	Սև, ABRO ,226գ կամ համարժեք	հատ	3
187	Փչովի ներկ	Բրոնզագույն, ABRO ,226գ կամ համարժեք	հատ	3
188	Ներկ / յուղաներկ/	Սպիտակ, SHEN Concern կամ համարժեք,4.5կգ	հատ	2
189	Ներկ / յուղաներկ/	Կապույտ, SHEN Concern կամ համարժեք,4.5կգ	հատ	1
190	Ներկ / յուղաներկ/	Կանաչ, SHEN Concern կամ համարժեք,4.5կգ	հատ	1

191	Ներկ / յուղաներկ/	Կարմիր, SHEN Concern կամ համարժեք,4.5կգ	հատ	1
192	Ներկ / յուղաներկ/	Դեղին, SHEN Concern կամ համարժեք,4.5կգ	հատ	1
193	Մետաղի ներկ	Գրունտ , 4 կգ CROWN կամ համարժեք	հատ	5
194	Ցեմենտ	Ցեմենտ Մ400, Հրազդան կամ համարժեք	կգ	200
195	Ջրի միացման խողովակ	45 սմ երկարության,մի կողմը կցորդիչով, լվացարանի և բաքի համար, VENUS կամ համարժեք	հատ	10
196	Ջրի միացման խողովակ	45 սմ երկարության, երկու կողմը հեղյուսով լվացարանի , VENUS կամ համարժեք	հատ	10
197	Ջրի միացման խողովակ	65 սմ երկարության ,երկու կողմը հեղյուսով լվացարանի , VENUS կամ համարժեք	հատ	10
198	Մետաղապլաստից խողովակներ	16/20սմ, ALTSTREAM կամ համարժեք	գծմ	20
199	Մետաղապլաստից խողովակներ	20/25սմ ALTSTREAM կամ համարժեք	գծմ	20
200	Մետաղական խողովակ	Φ 57մմ	մ	10
201	Փողրակ	Պոլ դուիմ,կոռդով	մ	100
202	Փրփրաթիթեղ (пенопласт)	2սմ հաստություն, 1 X 2 մ	հատ	22
203	Գամ (дюбель пенопласти)	Փրփրաթիթեղի դյուբել(2սմ, 1X2 մ-անոցի համար)	հատ	90
204	Ներկ	Գուաշ(6 գույնի՝ սպիտակ,սև, կարմիր, կապույտ,կանաչ,դեղին,)	տյուբիկ	20
205	Բրեզենտի ծածկ	12 մետրանոց,որակյալ	հատ	2
206	Շերտավարագույրներ 1	2 x 2,05 մ (լայն. , բարձր.) ,մուգ գույնի	հատ	3
207	Շերտավարագույրներ 2	2x3.5 մ (լայն. , բարձր.) կտորե,	հատ	2
208	Շերտավարագույրներ 3	1.63x1.9 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	2
209	Շերտավարագույրներ 4	1.36x210 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	2
210	Շերտավարագույրներ 5	2.00x2.05 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	2
211	Շերտավարագույրներ 6	2.00x2.10 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	2
212	Շերտավարագույրներ 7	1.90 x2.05 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	2
213	Շերտավարագույրներ 8	1.90 x1.95 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	1
214	Շերտավարագույրներ 9	1.10 x2.10 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	1
215	Շերտավարագույրներ 10	2.60 x2.60 մ(լայն. , բարձր.) կտորե,	հատ	1
216	Կպչուն սինթետիկ գորգաձածկույթ	Որակյալ,կպչուն գորգ, 4 X 5մ	$մ^2$	20
217	Գորգիկ դռան առջևի	Կտորի 19 հատ, ռեզինի 2 հատ, 50 x 70 սմ	հատ	21
218	Գորգ ոտքեր մաքրելու (խոզանակ)	Ռեզինի,վրան խոզանակներով,50 x 70 սմ	հատ	2
219	Շիֆեր	1.5x8 մ,ամուր, ուղիղ, հաստությունը 0.8 սմ, թափանցիկ, <<Поликарбонат: прозрачный шифер>>	$մ^2$	12
220	Խրոց	Եվրոխրոց<<Вилки электрические>>,makel կամ համարժեք	հատ	30
221	Ծալքաթիթեղ(Պրոֆնաստիլ)	2.5 մ լայն X 1.8 մ երկ,կտրված լինի երկարության մասից,ԿՊ21, հաստություն <<оцинкованныи профнастил>> ,հաստ.- 0.50մմ	$մ^2$	4,5

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

Հավելված թիվ 2
<<>> --------2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/7-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Շինանյութ

h/h	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափ-ման միա-վորը	Միավո-րի գինը (ՀՀ դրամ)	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	Շինանյութ					100%						100%	

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

Հավելված թիվ 3
<<>> ---------- 2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/7-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Շինանյութ

h/h	Ապրանքի			Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափ-ման միա-վորը	Միավո-րի գինը (ՀՀ դրամ)	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	Շինանյութ					100%						100%	

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

Հավելված թիվ 4
<<>> -------- 2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/7-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____
ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> 2015թ.

Պայմանագրի համարը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝<<->> ------ 2015թ:Պատվիրատուն՝Վանաձորի Պետական համալսարանն ի դեմս ռեկտոր Գ.Խաչատրյանի:Կատարողն՝ ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները,մատակարարումների ծառայությունները /այսուհետև աշխատանքների/համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին-գնման ժամանակացույցին,կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը << >> 2015թ-ից մինչև <<-->> _____ 2015թ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ.դր)	Վճարման ժամկետը

Վերոհիշյալ աշխատանքների վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց Աշխատանքը ընդունեց

_____ _____

(ստորագրություն) (ստորագրություն)